ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2016 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08

Պատվիրատուն՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-08 ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը:

Հարցադրում: << Հարգելի մրցութային հանձնաժողով,

Խնդրում եմ պարզաբանել, թե ինչ նկատի ունեք «արտոնագրված սերվիս կենտրոններ» գրառումով և ու կողմից պետք է արտոնագրված լինեն սերվիս կենտրոնները:

Ցանկանում ենք տեղեկացնել, որ Հավելված 1-ում նշված «ՀՀ տարածքում առնվազն երեք արտոնագրված սերվիս կենտրոնների առկայություն» նախապայմանին չի բավարարում համակարգչային տեխնիկա արտադրող ընկերություններից ոչ մեկը՝ Lenovo, Dell, Acer, Fujitsu, HP և այլն, եթե նկատի ունեք արտադրողի կողմից արտոնագրված սերվիս կենտրոններ:

Ընդունելի է արդյո՞ք արտադրողի կողմից արտոնագրված երկու սերվիս կենտրոնի առկայությունը:>>

Հարցադրման ստացման ամսաթիվ: 04 նոյեմբերի 2016թ.:

Պարզաբանում:

<<Հայտնում ենք, որ Հրավերի թիվ 6 հավելված հանդիսացող պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրով, սահմանված պահանջները հստակ շարադրված են եւ փոփոխման ենթակա չեն:

Մրցույթի յուրաքանչյուր մասնակից պարտավոր է բավարարել Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին:

Պարզաբանում ենք նաեւ, որ Ձեր կողմից նշված պահանջը նպատակ ունի գնման ենթակա համակարգչային տեխնիկայի /համակարգիչների եւ համակարգչային սերվերների / երաշխիքային եւ հետ երաշխիքային սպասարկումը կազմակերպել որակյալ մասնագիտացված կազմակերպություններում՝ առաջարկվող ապրանքանիշի գործարանային պահեստամասերով եւ որակյալ մասնագետների միջոցով:>>

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ: